**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 05.12.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2019/204

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Հայրենի Տուն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնանշման հարցում, Երևանի Արտաշիսյան և Շիրակի փողոցների խաչմերուկում հեղեղային ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18631-2019 գրությամբ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 06.11.2019թ. թիվ 01/61-23379 գրության հիման վրա, 12.11.2019թ.-ին «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 12.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 19.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 19.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.12.2019թ.-ին:

## 2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 06.11.2019թ. թիվ 01/61-23379 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

*«ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն:*

*Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:*

*«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:*

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի Մասնակիցը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չունի, որը համաձայն հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:*

*Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝*

*մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:*

*Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:*

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, 06.11.2019թ.-ին ներկայացվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Հայրենի Տուն» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

**3. <u>«Հայրենի Տուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18631-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 19.11.2019թ.-ի գրությամբ Ընթացակարգի հիմքերի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

*««Հայրենի Տուն» ՍՊԸ-ն ս.թ. հոկտեմբերի 14-ին մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով «Երևանի Արտաշիսյան և Շիրակի փողոցների խաչմերուկում հեղեղային ցանցի կառուցման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցմանը: Սույն ընթացակարգի ընդհանուր գինը ըստ հրավերի կազմել է 5432,34 հազար ՀՀ դրամ, որից 905,39 հազար ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: ՍՊԸ-ն՝ համաձայն սույն գնման ընթացակարգով ներկայացված հավելված 2-ի, առաջարկել է աշխատանքները իրականացնել 4888,8 հազար ՀՀ դրամով, որից 814,8 հազար ՀՀ դրամը՝ ԱԱՀ և զբաղեցրել առաջին տեղ (հիմք՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի արձանագրություն): Որից հետո ՍՊԸ կողմից, սահմանված ժամկետում, ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը: Հոկտեմբերի 18-ին գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, որ համաձայն ՊԵԿ կողմից տրամադրված եզրակացության ՍՊԸ-ն չունի նախորդ երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ: ՍՊԸ-ն տնօրենի կողմից*

*կայացվեց որոշում, որպեսզի չխոչընդոտվի տվյալ գնման ընթացակարգի իրագործումը, շտկման համար նախատեսված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ծանուցագիր ըստ որի. «ընկերությունը պատրաստակամ է տրամադրել սույն ընթացակարգի շրջանակում ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի 100 տոկոս հայտի և պայմանագրի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևով, որը կփոխանցվի գանձապետական հաշիվ:*

*Նաև ընկերությունը պատրաստակամություն է հայտնում հայտով սահմանված ժամկետից շուտ (պայմանագրի կնքման պահից 20 օրացույցային օր) ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները»:*

*Ս.թ. հոկտեմբերի 24-ին տեղեկագրում հրապարակված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի N 4 արձանագրության 1.2 կետի համաձայն.*

*««Հայրենի Տուն» ՍՊ ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում չի շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով կարգի 48-րդ կետի 2-րդ մասի դրույթով՝ որոշեց մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:*

*Ս.թ. նոյեմբերի 12-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից տեղեկագրում հրապարակվել է ՍՑ-ԼՕ-2019/204 ծածկագրով «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ հայտարարություն:*

*Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝*

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,*

*բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,*

*գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:*

*Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան*

*հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:*

*Վերը նշված հոդվածների բառացի մեկնաբանությունից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնացի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:*

*Տվյալ դեպքում սույն գործով ենթադրյալ հիմքը ի հայտ է եկել ս.թ. հոկտեմբերի 24-ին (հիմք՝ N 4 արձանագրություն):*

*Պատվիրատուի (Երևանի քաղաքապետարան) կողմից «Հայրենի Տուն» ՍՊԸ-ի տվյալները փոխանցվել են լիազորված մարմին (ՀՀ ֆինանսների նախարարություն) ս.թ. նոյեմբերի 6-ին, այնինչ դրանք պետք է փոխանցվեին ոչ ուշ՝ քան ս.թ. հոկտեմբերի 31-ը:*

*Այսինքն, պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին ուղարկել է ոչ թե 5 աշխատանքային օրվա ընթացքում, այլ 9 աշխատանքային օր, ինչը չի պահպանել ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջը:*

*Համաձայն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին կետի Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, փոխալ դեպքում պատվիրատուն որևէ օենքով լիազորված չի եղել շրջանցելու ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջը: Քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է ժամկետ, որը որոշակիացնում է պատվիրատուի գործողությունները, հակառակ պարագայում կստացվի, որ ցանկացած ժամանակ պատվիրատուն կարող է գրավոր կարգով դիմել լիազորված մարմին՝ ներկայացնելով մասնակցի վերաբերյալ համապատասխան հիմքեր:*

*Նման պայմաններում պնդում ենք, որ «գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պարտավոր է մերժել «ֆինանսների նախարարության 12.11.2019թ. ՍՅ-ԼՕ-2019/204 ծածկագրով «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:*

*Նշված փաստը արդեն իսկ բավարար է վերը նշված ծածկագրով նախաձեռնված ընթացակարգը մերժելու համար, սակայն ցանկանում ենք նշել նաև այլ փաստեր՝*

*Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 06.11.2018թ. N 600-Ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին հրամանի 15-րդ կետի՝ անձն (Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված գնումների հետ կապված բողոքներ քննող անձ) ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տփալ բողոքի քննության շրջանակում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը:*

*Սակայն, մինչ օրս ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն չի ստացել ծանուցում նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի, նիստի անցկացման վայրի և ժամի վերաբերյալ, ինչը համարվում է վերը նշված կարգով նախատեսված դրույթի խախտում:*

*Փոխարենը նմանատիպ ծանուցում gbqa_ohanyan@mail.ru էլ. հասցեից ստացել է «Արսգոշին» ՍՊԸ տնօրեն Գոռ Հակոբյանը՝ իր ՍՊԸ էլ. հասցեին (gbqa_ohanyan@mail.ru), ինչի միջոցով էլ մենք տեղեկացել ենք սույն ընթացակարգի վերաբերյալ:*

*Ելնելով վերը նշված փաստերից «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն խնդրում է բողոքներ քննող անձին մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2019թ. ՍՑ-ԼՕ-2019/204 ծածկագրով «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:»:*

**4. <u>ՍՑ-LO-2019/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի Արտաշիսյան և Շիրակի փողոցների խաչմերուկում հեղեղային ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.10.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ որոշել է գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 15.10.2019թ.-ին ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 18.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չունի, որը համաձայն հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, որոշել է նիստը կասեցնել և առաջարկել «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 24.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 48-րդ կետի 2-րդ մասի դրույթով, որոշեց մերժել մասնակցի կողմից ներկայացրած հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.11.2019թ.-ին:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18631-2019 գրությամբ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի Արտաշիսյան և Շիրակի փողոցների խաչմերուկում հեղեղային ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.10.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի 14.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 18.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Հայրենի Տուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չունի, որը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, ինչով

պայմանավորված նիստը կասեցվել է և առաջարվել է «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 24.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով՝ Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը մերժվել է:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.11.2019թ.-ին:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 24.10.2019թ.-ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի նույն օրը կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 06.11.2019թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի

նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրահիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված

պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18631-2019 գրությամբ «Հայրենի Տուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/204 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**